Դատարանը, նկատի ունենալով նաև, որ քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ դատական ծախսեր առկա չեն, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՐՄԼԵԴ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետարանի՝ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից լուսարձակների ձեռքբերման նպատակով 22.06.2023 թվականին հայտարարված թիվ «ԱՄ-ՀԲՄԱՊՁԲ-23/01-ԱՄ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2023 թվականի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Կատյա Նազարեթյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**